նալով նուազեցան մինչև անկան, այլ գրէ թէ դեռ ևս 'ի ժամանակի յայսմիկ մէջ իշխանութեան Եւրոփացւոց գտանի բազում մասունս անխախտելի Օրինօք վարմունք որում թագաւորք նոցայ ոչ իշխեն փոխարկել, և միշտ ընդունին կարծիս ծերակուտին իւրեանց, որ ելեալ 'ի խորհրդարանէ և 'ի միջէ ծերակուտից նոցայ առաւելագոյն քան զամենեսեան, ազգն մեծ բրիթանիացւոց որում պատիւ թագաւորին իւրեանց յորջորջեն ազատութիւն և Տեառն իւրաքանչիւր ընչից իւրաքանչիւրոք անձանց. որովհետև շարն խօսից իմոց էհաս մինչև ցասա որում յիշումն եղև ազգն հռոմայեցւոց՝ հարկաւոր համարեցի փոքրիկ խօսիւք յիշեցուցանելով 'ի միտս ընթերցողիդ դնել մասն ծայրագոյն գործին հռոմայեցւոց ընդ յայսմ որում ընդ հանիւր աշխարհ գովաբանեցին արարս նոցայ, և արարք նոցայ 'ի ժամանակի երջանկութեան նոցայ այնքան բարեգոյն, և բազումք են որ ոչ յինէն և ոչ ոք գրճագրոց պատմել կարէ, բայց ընթեռնուլ պատմութիւնս նոցայ, և յոյժ հարկաւոր է մեզ ջանալ եթէ կարելի լինի պատմութիւնն հռոմայեցւոց սկզբէն մինչև նուազիլ նոցայ 'ի հայոց բառբառ թարգմանել, որպէս ունին ըստ իւրաքանչ ամենայն ազգ եւրոփացւոց ընդ իւրեանց և ով ոք որ այս պատճառ թարգմանութեան և բարի նշաւակիս լուսածելոյ մէջ հայոց լիցի՝ յիշատակ